



**Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի Edu Armenia
Նախաձեռնություն**

**Ուսուցիչների պետական պարտադիր
վերապատրաստման
դասընթաց 2022**

Ջետազոտական աշխատանք

**Թեմա՝ ՏՀՏ կիրառությունը օտար լեզուների
դասավանդման ժամանակ:**

**Ջետազոտող ուսուցիչ՝ Ա.Խաչատրյան /Ջրագդանի Վ.Սարոյանի
անվան թիվ 11 հիմն.դպրոց/**

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. ՏՀՏ խնդիրները.....	5
Գլուխ 2. Խնդիրների լուծման տարբերակները.....	9
Եզրակացություն.....	13
Գրականության ցանկ.....	14

Ներածություն

Մենք ապրում ենք բարձր տեխնոլոգիաների դարաշրջանում, որտեղ համակարգիչն ու համացանցը ոչ պակաս կարևոր դեր են խաղում: Հիմա մեզ համար բարդ է պատկերացնել կյանքն առանց համակարգչի ու համացանցի: Նրանց միջոցով մենք կարող ենք գտնել ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն, կարող ենք իմանալ հետաքրքիր փաստեր պատմությունից, կարող ենք կատարել գնումներ առանց տանից դուրս գալու, շփվել ընկերների և բարեկամների հետ ամբողջ աշխարհով :

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից, այն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի և շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Ուսուցիչները նախատեսում են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, հիմնականում դպրոցներն ունեն համակարգչային սենյակ, համացանց, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում:

Թեմայի արդիականությունը:

Հանրակրթության նպատակը ոչ միայն աշակերտին գիտելիք փոխանցելն է, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է՝ ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից և փոփոխվող աշխարհում: Գրեթե բոլոր զարգացած երկրներն արդեն հասկացել են, որ առանց հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին:

Հետազոտական աշխատանքի խնդիրները:

1. Արդյո՞ք ՏՀՏ-ը ունեն և՛ դրական, և՛ բացասական կողմեր:
2. Արդյո՞ք ՏՀՏ-ը արդյունավետ են օգտագործվում ուսուցման պրոցեսում:
3. Արդյո՞ք յուրաքանչյուր դաս կամ փուլ պահանջում է համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման իր մոտեցումը:

Վարկած`ՏՀՏ գործիքների կիրառությունը օտար լեզուների դասաժամին կբարձրացնի սովորողների մոտիվացիան` լեզվի յուրացման մակարդակը:

...համակարգչային աշխարհը... ուժի պատրանք է տալիս: Իր բոլոր դրսևորումներով՝ սկսած տեքստի հզոր խմբագրիչներից, մինչև ցանցեր, որտեղ չկան հեռավորություններ, և խաղեր, որտեղ դուք ջախջախում եք քաղաքակրթությունները և նվաճում գալակտիկաները...¹



¹ Ա.Լուկյանենկո << Աշխարհային այցելություններ >>

Գլուխ 1.

ՏՀՏ խնդիրները

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնագավառում կատարվող արմատական փոփոխությունները սերտորեն առնչվում են ՏՀՏ արդի միջոցների զարգացման եւ տարածման հետ: Սրա հետ կապված՝ փոփոխություն է կրում նաեւ ուսուցման եւ ուսումնառության բնույթը: Ուսուցման ժամանակ ՏՀՏ-ների օգտագործման առանձնահատկությունների ուսումնասիրությունը պետք է ներառի կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծման տարբեր գործոններին ծանոթությունը: Համակարգչային տարբեր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ուղիներն ու հնարավորությունները: Դասավանդման եւ ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաեւ դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Հարկ է նշել, որ ոչ բոլոր մեթոդներն ու ծրագրերն են ներդաշնակորեն ներգրավվում ուսումնադաստիարակչական գործընթաց, որը բացատրվում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով: ՏՀՏ-ի ինտեգրացումը դասապրոցեսին բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը: ՏՀՏ-ները ուսուցման պրոցեսը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ ինֆորմացիան անհրաժեշտ ժամանակին: ՏՀՏ-ն անհրաժեշտ է ժամանակակից դասին: Դասապրոցեսին ակտիվ օգնական և մասնակից կարող է լինել աշակերտը: Յուրաքանչյուր աշակերտ յուրացնում է նոր գիտելիքները տարբեր ձևով: Նախկինում մանկավարժների համար դժվար էր գտնել անհատական մոտեցում ամեն աշակերտի համար: Ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս ուսուցչից աշակերտին գիտելիքների փոխանցման ժամանակ նշանակալից ձևով մեծացնել ուշադրությունը, հիշողությունը: Այժմ դպրոցները ՏՀՏ-ի կիրառմամբ ստացել են հնարավորություն մատուցելու նոր ինֆորմացիան այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները: ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասապրոցեսի կազմակերպման մեջ: Այսպիսով, ՏՀՏ-ների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է, և դրական նշանակությունը ակնհայտ է:

Խնդիր 1

Ինչպես ամեն ինչ կյանքում, տեղեկատվական տեխնոլոգիաները նույնպես ունեն դրական և բացասական կողմեր:

SՅՏ-ի ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

- ❖ Տեղեկատվությունը շատ է, բայց ոչ թե համակարգված, ինչը կարող է ճնշող լինել.
- ❖ ՏՅՏ-ն կարող է շեղելու աղբյուր լինել, որը ցրում է առարկան

իր նպատակներից:

- ❖ Սարքերը եւ գործիքները ` որպես պլատֆորմ, անընդհատ փոխվում են, ինչը ենթադրում է շարունակական թարմացման

ջանք:

- ❖ Մեծացնում է անձնական տվյալների խոցելիության ռիսկը

SՅՏ-ի ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

- Դրանք հեշտացնում են տեղեկատվության հասանելիությունը.
- Այն նպաստում է տարբեր կրթական կենտրոնների ցանցային

կապին ` ընդլայնելով համայնքի հասկացությունը.

- Այն խթանում է մտածողության նոր ձևեր.
- Այն նախընտրում է գիտելիքների համատեղ կառուցման

սկզբունքը.

- Հնարավորություն է տալիս օգտվողների թվային

գրագիտությանը.

- Կրթության ոլորտում դրանք օգնում են հաղթահարել աշակերտների եւ ուսուցիչների սերնդային տարբերությունը.

Խնդիր 2

Սակայն հարց է առաջանում, թե որքա՞ն արդյունավետ են դրանք օգտագործվում ուսուցման պրոցեսում:

Հաճախ համակարգիչը (թիչ բացառությամբ) դասերին օգտագործվում է որպես ցուցադրման միջոց եւ լիարժեքորեն չի ապահովում սովորողների ակտիվությունը: Այստեղ մենք գործ ունենք կեղծ տեղեկատվական ուսուցման հետ, երբ համակարգիչն արհեստականորեն է ներգրավվում ուսումնական գործընթացի մեջ: Այս վտանգն ստեղծում է նոր մեթո- դիկայի խաբկանք, եւ իրականում առավել հաճախ իջեցնում է ուսումնական գործըն- թացի արդյունավետությունը:

Ուսումնաճանաչողական գործընթացում դասավանդողի համակարգչային կուլտուրան ենթադրում է ՏՀՏ միջոցների չափավորված, տեղին ու ժամանակին համալիր կիրառում:

Պետք է նշել, որ ուսուցման համակարգչային տեխնոլոգիաները պետք է նպատակային իրականացնել միայն համապատասխան նյութական բազայի եւ վերջինիս ծրագրային ապահովման, դասավանդողի համակարգչային գրագի- տության եւ կուլտուրայի առկայության դեպքում:

Իհարկե բոլորն են հասկանում, որ համակարգիչը չի կարող փոխարինել կենդանի ուսուցչին, բայց այն կօգնի հեշտացնել ուսուցչի աշխատանքը, հետաքրքրել երեխաներին, ապահովել նյութի առավել տեսողական, բոլորովին նոր ընկալումը:

Ես ինքս հաճախ եմ կիրառում իմ դասերին տեղեկատվական տեխնոլոգիաներ



Խնդիր 3

Յուրաքանչյուր դաս կամ փուլ պահանջում է համակարգչային

տեխնոլոգիաների օգտագործման իր մոտեցումը՝

1. Նոր նյութի յուրացման դասերին արդյունավետ օգտագործել ցուցադրական ծրագրերը, որոնք թույլ կտան տեսական նյութեր բերել աշակերտներին մատչելի, վառ, տեսողական տեսքով: Օրինակ՝ գրողի կյանքը, որևէ տեսարժան վայր պատկերող տեսաֆիլմերի օգտագործումը և այլն:

2. Նոր նյութի ամրապնդման ժամանակ, որտեղ աշակերտները համախմբում են ձեռք բերված գիտելիքներն ու թեմայի անհրաժեշտ հմտությունները: Օրինակ՝ պատրաստի թեստերի օգտագործումը, էլեկտրոնային տարբեր առաջադրանքները.

Այսպիսով ՏՐՏ-ների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է, և դրական նշանակությունը ակնհայտ է, չնայած նրան, որ ՏՐՏ-ը ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: ՏՐՏ-ի ճիշտ օգտագործման դեպքում ուսուցիչը կարող է քաղել միայն օգուտներ, որից շահում է և՛ աշակերտը, և՛ դասապրոցեսը:

Գլուխ 2.Վարկածի ներկայացում

ՏՅՏ-ի կիրառումը դասապրոցեսի տարբեր փուլերում:

1. Նոր թեմայի ներակայացում. դասի թեման ներկայացվում է լուսանկարների տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ՝ տեսության համառոտ ներկայացմամբ: Նմանատիպ դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, աշակերտները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

2. Ուսուցչի բացատրություններին ուղեկից օգտագործվում են կոնկրետ դասերի համար ստեղծված նյութեր՝ համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ: Նման դեպքերում երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով և հաճույքով են կատարում առաջադրանքները, իսկ ներկայացված նյութը լինում է կիրառական, տեսանելի ու հասկանալի:

3. Աշակերտի անհատական աշխատանք. Ուսուցիչը դառնում է ուղեկից, ով ցույց է տալիս ճանապարհը, բայց ճանապարհի ամբողջ «ծախսն» իր վրա չի վերցնում: Աշակերտը ընթացքում ոչ միայն պետք է ապահովի իր ներակայությունը, այլև լինի ակտիվ մասնակից, ջանք գործադրի, ցույց տա իր մոտեցումներն ու ինքը փորձի ճանապարհն առավել գեղեցկացնել, հետաքրքրացնել: Իսկ նորագույն տեխնոլոգիաների միջավայրը երեխաների սիրելիներից է, որը կարելի է և պետք է օգտագործել ի շահ նրանց:

Խաղալու փոխարեն երեխան համակարգչով կարող է պատրաստել հետաքրքիր պրեզենտացիա դասի թեմայի վերաբերյալ:

4. Գիտելիքի ստուգում. համակարգչային թեստավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Հնարավոր է կազմել այնպիսի ստուգիչ թեստեր, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր ունակություններին ու կարողություններին համապատասխան առաջադրանքներ, որոնք կլինեն մեկ օրինակով: Սա ամենահարմար տարբերակներից է ապահովել շերտավոր ուսուցում, անհատական մոտեցում: Եվ եթե

դասարանում սովորում է անգամ 30 երեխա, յուրաքանչյուրը կստանա տարբեր առաջադրանքներ, վերջիններս էլ կստուգվեն ավտոմատ:

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսը տեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին՝ ժամանակը, որը ժամանակակից մարդուն խիստ պակասում է: Իհարկե, կյանքի բարձր տեմպը, ժամանակի արագացված զարկերակը հսկայական ազդեցություն ունեն մատաղ սերնդի դաստիարակության և կրթության վրա: Ժամանակակից ուսուցիչը պետք է հստակ հասկանա, որ երեխաները, որոնց ինքը պատրաստվում է սովորեցնել, ծնվել և դպրոց են եկել արդեն 21-րդ դարում, ինչը նշանակում է, որ նրանք մեծացել և ձևավորվել են բոլորովին այլ տեղեկատվական տարածքում, քան 80-90-ականների երեխաների սերունդները: Հասկանալի է, որ համակարգիչը դառնում է սիրված ժամանց, դպրոցականի կյանքի անբաժանելի հատկություն, իսկ երբեմն էլ, ցավոք, լավագույն ընկեր:

Համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը օտար լեզուների դասավանդման ընթացքում ապահովում է մի շարք առավելություններ.

- ուսուցման գործընթացի նկատմամբ հետաքրքրության եւ շարժառիթի աճ,
- մոդելավորման հնարավորություն,
- ուսումնական նյութի բովանդակության արագ յուրացում,
- պատճառահետեւանքային կապերի բացահայտում,
- նպաստում է սովորողների գիտելիքների ստուգման անաչառությանը,
- արագ արձագանքում է սովորողի գործողություններին, ընձեռում է անհատական աշխատանքի (ուսուցման) հնարավորություն,
- տեղեկատվության հաղորդման գրավիչ եւ փոփոխվող ձևերի գործածման շնորհիվ խթանում է կրթական գործընթացը,
- առաջադրանքների կատարման ժամանակ տալիս է ճիշտ պատասխանի անմիջական հաստատման հնարավորություն,
- ապահովում է տեղեկատվական պաշարների հասանելիություն՝ նյութը խորացված ուսումնասիրելու համար,
- ընձեռում է գրավոր աշխատանքների պլանավորման եւ ռացիոնալ իրականացման հնարավորություն:

Այսպիսով, կարող ենք ասել, որ օտար լեզուների դասավանդման ընթացքում համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման ավանդական եւ այլ միջոցների համեմատ ունի առավելություններ եւ ուսումնական գործընթացի հաջողությունը կապված է ՏՐՏ-ների համակարգված կիրառման հետ:Այն ենթադրում է ուսուցման դիդակտիկ սկզբունքներին համապատասխանող,ուսուցիչների եւ հոգեբանների կողմից համատեղ էլեկտրոնային դասընթացների ստեղծում, որը պետք է բավարարի հետեւյալ սկզբունքները`

- համապատասխանեն օտար լեզուների ուսումնական ծրագրերին, ինչպես ծավալի, այնպես էլ ըստ կառուցվածքի,
- պետք է առանձնահատուկ կառուցվածքի պարզությամբ եւ օգտագործման արդյունավետությամբ,
- պետք է գործածվեն օտար լեզուների դասընթացի համար կազմված կամ առավելա - գույնս հարմարեցված որակյալ համակարգչային ծրագրեր (հաշվի առնելով յուրա - քանչյուր տարիքային խմբի առանձնահատկությունները):

Իսկ ի՞նչ է ստանում ուսուցիչը ՏՐՏ-ի կիրառման միջոցով`

1. Տեսնում է իր աշխատանքի արդյունքը:
2. Ստանում է այն զգացողությունը, որ իր ժամանակը ծախսվել է արդյունավետ եւ նպատակային:
3. Ստանում է բավարարվածության զգացում իր աշխատանքից` տեսնելով աշակերտների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին:
4. Անընդհատ զարգանում ու կատարելագործվում է որպես մասնագետ, կիրառում է ժամանակակից մեթոդներ իր աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, նոր հմտություններ ձեռք բերելու եւ միշտ ձեռքը ժամանակի զարկերակին պահելու համար:



Ես կարծում եմ, որ ՏՀՏ-ների կիրառմանը դպրոցում կնպաստեն նաև հաճախակի կազմակերպվող մրցույթները, որոնք կմեծացնեն աշակերտների և ուսուցիչների հետաքրքրություններն ու ցանկությունները դրանց կիրառման ուղղությամբ: Ուսուցիչները պետք է գիտակցեն ՏՀՏ կիրառության անհրաժեշտությունը: Ճիշտ կլինի, որ դպրոցում լինի ուսուցիչների փորձի փոխանակման ժամեր, կիրառվեն թախուսական մեթոդներ:

Բացի համակարգչային սենյակից անհրաժեշտ է համակարգիչներով եւ/ կամ էկրաններով զինել գրադարանները, դասասենյակները, լաբորատորիաները, այնպես որ, դրանք դառնան բոլոր առարկաների անբաժան մասը:



Եզրակացություն

Մեր օրերում կրթական հաստատությունների նյութատեխնիկական անբավարար բազայի եղելությունը կարելի է փորձել փոխհատուցել մեթոդական նոր մոտեցումների ներդրմամբ: ՏՅՏ-ի ինտեգրումը կնպաստի սովորողների գիտական ուսումնասիրություն կատարելու հմտությունների, արդյունքների վերլուծության ու ընդհանրացումներ կատարելու կարողությունների ձեռավորմանը: Դրանք ժամանակ են խնայում դասի ընթացքում, նյութի մեջ ընկղմվելու խորությունը, սովորելու համար ավելի մեծ մոտիվացիա, ուսման ինտեգրատիվ մոտեցում, աուդիո, վիդեո, մուլտիմեդիա նյութեր միաժամանակ օգտագործելու ունակություն, աշակերտների հաղորդակցական կարողությունը ձեռավորելու հնարավորությունը, քանի որ աշակերտները դասի ակտիվ մասնակիցներ են դառնում: Մենք պետք է ավելի ու ավելի շատ օգուտներ քաղենք տեխնոլոգիական առաջընթացներից` իմանալով նաև, թե ինչպես բարձրացնել դրանց ճիշտ օգտագործման մասին իրազեկույթ - յունը, քանի որ դրանք կարող են մեզ տանել դեպի շատ ավելի դինամիկ, զվարճալի և արդյունավետ կրթության մակարդակ: Տեխնոլոգիաների ներդրումը կրթությանը բերում է բազմաթիվ առավելություններ, բայց պետք է հաշվի առնել, որ ինչպես շատ արդյունավետ և դրական են այս գործընթացի համար, կան նաև թերություններ: Բոլորս գիտենք, որ այս աշ - խարհում ոչինչ կատարյալ չէ:

Ցանկացած առարկայի ուսուցիչ պետք է լիարժեք տիրապետի այն բոլոր "հրաշքերին" (ծրագրերին, կայքերին, դրանցում առկա ֆորումներին, տեսանյութերին և մասնագիտական ցանցերին), առանց որոնց այսօր անհանր է կյանքում: Այսօր անհնար է պատկերացնել ժամանակակից ուսուցիչ ով չի տիրապետում այդ գործիքներին: Դրանցով հնարավոր է ուսումնական գործընթացը դարձնել հետաքրքիր, ժամանակակից և որակյալ:

Օգտագործված գրականություն

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ / Էդ. - Կազմող - Մինսկ.
Կրասիկո - Տպագիր, 2008
2. Մանկավարժական տեխնոլոգիաներ / Ընդհանուր խմբագրության ներքո - Մ .:
ECC «Մարտ», 2006 թ
3. «Տեղեկատվական տեխնոլոգիաները հանրակրթության մեջ» գիտաժողովի
մասնակիցների աշխատանքների ժողովածու Սարատով -2010: Սարատով. GOU
DPO «SarIPKiPRO» հրատարակչություն, 2010 թ.
4. Սելենկոյի տեխնոլոգիան դպրոցում: - Յարոսլավլի IRO, 2003
5. URL <https://www.rekursosdeautoayuda.com/hy/tics-educacion/>
6. URL <https://monster-evo.ru/hy/belinskijj/chtotakoe-ikt-v-obrazovanii-vidy-sovremennyh-informacionno-kommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/>
7. URL <https://www.azatutyun.am/a/2214129.html>
8. URL <http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/%D5%8F%D5%80%D5%8F-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8->